

# ԹՈՎԱՄՈՍՈՒ ԵՐԻՑՈՒ

ԵՐԳԻ ԶՈՒԱՐՁՈՒԹԵԱՆ \*

**(1)** Հայուառացեալ կեանս եւ այ սուտ աշխարհս երաղ ունայն է ,  
Ապրանք տուն եւ մալ , ոսկի եւ ջուհար յոյժ ընդունայն է .

Թէ ունիք ապրիլ ուտել եւ խըմել ցնծութիւն այն է ,  
Սեղան զարդարէք , շիշէն շարէք եւ անուշ արէք :

**(2)** Պղորմութիւն տալն աղօթքն եւ ողբալն հոգւոյն կարէքն է ,  
Չուղելն եւ նախանձ եւ օրինազանց՝ մեղաց չարիքնէն .  
Սէրն եւ ցնծութիւն եւ ուրախութիւն մարմնց բարիքն է .  
Սեղան զարդարէք . (կլնէ) .

Վայելուչ նստէք , ուրախ ընթացէք որ զուարձանայք .  
Բարեաց հետեւէք , օրինաց լսէք , չարեաց հեռանայք .  
Ուտէք եւ խըմեք , սիրով խնդացէք , զծեառնէ գոհանայք : Սեղան” .

**(3)** ԵՇԾիս ձըգեցէք , կարսաներ բացէք , պատիւ մատուցէք ,  
Միաբան կացէք , միշտ ուրախացէք , միմեանց հատուցէք .  
Պատուելի արանց երախտաւորաց հեղութիւն ցուցէք . Սեղան” .

**(4)** Եմաս ածող գու , ամենայն մարդոյ գիտութեամբ նայէ .  
Խըմաղին լիբ տուր , չուզովին քիչ տուր , նըմա խնայէ .  
Լաւ գինին լից տուր , թասին մոխի տուր , համ յիշէ նայէ : Սեղան” .

**(5)** Աղ եւ պալապան ածեն անխափան , քաղցրաձայն սանթուր .  
Չոր մազան շարէդ , հաւ քապազ բերէք , բեր գուլապտոն տուր :  
Ու որ մառեօլ է՝ նըմա դընողիր , վատ գինին յետ առուր : Սեղան” .  
ԵՇ հարք եւ եղբարք , եւ մեծ պարոնայք որ ունիք թարըն ,  
Ասէք միակամ բանահամ գինուն կարտուն .  
Տօլուլուն ձըգեցէք , երէցն յիշեցէք՝ այրի թովմասըն . Սեղան” .

(\*) Տէր թովմաս քահանացս այս Պոլսէցի ժամանակակից է Կոստանդինուպոլսց հանգուցեալ բարեյիշատակ Յովհաննէս Պատրիարքին Կողարքի . Ունի ուրիշ տաղէր եւս և սիրաբայր երգեր , որով թերեւս սփոփած է իւր այրիտութեան վլճակը .